



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 6

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2011 թվականի հունիսի 27-ից

● ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ	4, 61
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 63</i>
 ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	 11, 68
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>13, 70</i>
 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	 15, 71
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	<i>17, 73</i>
 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	 19
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	<i>21</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>53</i>
 ՑՈՒՑԻՉՆԵՐ	 55
 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	 57
 ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	 74

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 61
Сведения о выданных патентах.....	6, 63
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	11, 68
Сведения о выданных патентах.....	13, 70
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	15, 71
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	17, 73
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	19
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	21
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	53
УКАЗАТЕЛИ.....	55
СООБЩЕНИЯ.....	57
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	74

CONTENTS

INVENTIONS.....	4, 61
Information on granted patents.....	6, 63
UTILITY MODELS.....	11, 68
Information on granted patents.....	13, 70
INDUSTRIAL DESIGNS.....	15, 71
Information on registered industrial designs.....	17, 73
TRADE MARKS.....	19
Information on registered trade marks and service marks	21
Information on renewal of effect of trademark registration	53
INDEXES.....	55
REPORTS.....	57
TWO-LETTER CODES.....	74

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը A գյուտի արտոնագիր B արտոնագրաունակության մասին եզրակացություն
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) (2011.01) (11) 2524 (13) A
A01C 7/00
- (21) AM20110005 (22) 27.01.2011
- (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
- (72) Շավարշ Մացակի Գրիգորյան (AM), Սիմոն Վլադիմիրի Ռաֆայելյան (AM), Սիրանուշ Արթուրի Հակոբյան (AM)
- (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
- (54) **Շաղացան սերմթաղիչ խոփիկ**
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես, շաղացանի շաղացան սերմթաղիչ խոփիկներին:
- Շաղացան սերմթաղիչ խոփիկն ունի սլաքաձև թաթիկ, թաթիկին ամրակցված սերմնատար խողովակաձև կանգնակ և կանգնակի ելքին տեղակայված սերմերի ցրիչ: Ցրիչի ելքում տեղակայված է ռետինապատ մետաղական գլանվակ: Գլանի ստորին ծնիչը թաթիկի հատակի հետ գտնվում է միևնույն հարթության մեջ: Խոփիկն ունի գլանվակի մակերևույթին հպվելու հնարավորությամբ տեղադրված զսպանակված քերիչ դանակ: Քերիչ դանակը գլանվակի երկարությամբ ուղղանկյուն, հարթ, մետաղական թիթեղ է, թիթեղի կողմերից վերինը ծխնիաձև ամրակցված է թաթիկի իրանին, իսկ ներքևինը հպվում է գլանվակի մակերևույթին:
- Ապահովում է սերմերի համաչափ ցրումը, 3 նկ.:
-
- (51) (2011.01) (11) 2525 (13) A
A61B 17/00
- (21) AM20100150 (22) 17.11.2010
- (71) Գևորգ Քարամյան (AM)
- (72) Գևորգ Քարամյան (AM)
- (73) Գևորգ Քարամյան, 2001, Վանաձոր, Տիգրան Մեծի 15, բն. 15 (AM)
- (54) **Արտաքին օստեոսինթեզի կոմպրեսիոն դիստրակցիոն ապարատ**
- (57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ օրթոպեդիային և տրավմատոլոգիային:

Ապարատն ունի երկու մետաղաձող, դրանց ամրակցված ձողեր: Մետաղաձողերի միջև տեղակայված է համադրման հանգույց, որն ունի միմյանց ամրակցված երկու ուղղանկյունաձև թաթեր: Թաթերն ունեն կենտրոնական անցք, իսկ դրանցից մեկի պարագծի երկայնքով կատարված են անցքեր: Թաթերն ամրակցված են դրանց կենտրոնական անցքերով անցնող համադրման տարրի միջոցով, կամ դրանցից մեկի պարագծի երկայնքով կատարված անցքերով և մյուսի պարագծի երկայնքով կատարվող՝ առաջին թաթի անցքերին համապատասխանող, ցանկացած չորս անցքով անցնող չորս գամասեղի միջոցով:

Ապահովվում են կոնստրուկցիայի հուսալիությունը և կայունությունը, բուժման ընթացքում կոմպրեսիայի և դիստրակցիայի հնարավորությունը, 4 նկ.:

- (51) (2011.01) (11) 2526 (13) A
A61K 31/00
- (21) AM20110032 (22) 24.03.2011
- (71) «ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
- (72) Հրաչիկ Գասպարյան (AM), Սահակ Գասպարյան (AM), Մարինա Ալեքսանյան (AM), Գոհար Մկրտչյան (AM), Անահիտ Պողոսյան (AM), Միքայել Խաչատրյան (AM), Էդգար Շիրինյան (AM), Թևոս Ղուկասյան (AM), Վիգեն Թովուզյան (AM)
- (73) «ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0014, Երևան, Ազատության 26 (AM)
- (54) **Այրվածքների բուժման դեղագործական բաղադրանյութ**
- (57) Գյուտը վերաբերում է կենսաօրգանական քիմիային, մասնավորապես՝ այրվածքների բուժման դեղագործական բաղադրանյութին:
- Բաղադրանյութը ներառում է ակտիվ նյութ՝ 6-(1-ֆենիլցիկլապենտիլ-1-կարբամիդա)-պենիցիլինի նատրիումական աղի բյուրեղահիդրատ (ֆեցիլին)՝ 5% և հիմք՝ կոնսերվանտների (էութանոլ G, լանետ O),

ժելազոյացիչների (կուտինա CP-A, սպան 60, տվին 60) և թորած ջրի խառնուրդ՝ 95%: Հիմքի բաղադրամասերը վերցված են հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. %. էութանոլ G՝ 13, լանետ O՝ 12, կուտինա CP –A՝ 3, սպան 60՝ 2, տվին 60՝ 2, ջուր՝ մնացածը: Դեղագործական բաղադրանյութը պատրաստված է քսուքի ձևով:

Ընդլայնվում է այրվածքների բուժման դեղագործական բաղադրանյութերի տեսականին, բարձրացվում է բաղադրանյութի վերականգնող հատկությունը:

(51) (2011.01) (11) 2527 (13) A
B65D 85/00
A23B 7/00
A01F 25/00

(21) AM20090145 (22) 27.11.2009

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Սուսաննա Սերյոժայի Սարգսյան (AM), Էլենորա Գեորգիի Մախլովա (AM), Հրաչ Վարդի Եգորյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Տաքդեղի փաթեթավորման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է փաթեթավորման եղանակին, մասնավորապես՝ տաքդեղի փաթեթավորման եղանակին:

Տաքդեղը դասավորում են պոլիմերային տարայի մեջ, ապա մատուցում են գազ և հերմետիկացնում, ընդ որում, որպես պոլիմերային տարա օգտագործում են երկշերտ տարա, որի ստորին շերտը PVC/PE-LD մակնիշի 400 մկմ հաստության պոլիվինիլքլորիդ/պոլիէթիլենային սկուտեղ է, վերին շերտը՝ PA/PE-LD մակնիշի 85 մկմ հաստության պոլիամիդ/պոլիէթիլենային թաղանթ: Որպես գազ օգտագործում են թթվածնի և ազոտի խառնուրդը՝ բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). թթվածին՝ 5 ազոտ՝ 95:

Երկարաձգվում է տաքդեղի պահպանման ժամկետը:

(51) (2011.01) (11) 2528 (13) A
C07D 307/00
C07D 307/26

(21) AM20090159 (22) 21.12.2009

(71) «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն

(72) Աիդա Ավետիսի Ավետիսյան (AM), Լուսինե Վլադիմիրի Կարապետյան (AM)

(73) «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1 (AM)

(54) **3-(N-R)Կարբամոիլ-4,5,5-եռմեթիլ-2,5-երկհիդրոֆուրան-2-ոնների ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիային, մասնավորապես՝ 3-(N-R)կարբամոիլ-4,5,5-եռմեթիլ-2,5-երկհիդրոֆուրան-2- ոնների ստացման եղանակներին և կարող է կիրառվել բժշկության մեջ: 3-Հիդրօքսի-3-մեթիլ-2-բուտանոնը ենթարկում են փոխազդեցության ցիանաքացախաթթվի համապատասխան ամիդի հետ նատրիումի մեթիլատի ներկայությամբ՝ բացարձակ մեթանոլի միջավայրում: Պրոցեսն իրականացնում են սենյակային ջերմաստիճանում 15 ժամ խառնելով, ռեակցիոն խառնուրդից հեռացնում են մեթանոլը, մնացորդը թթվեցնում (1 : 1) աղաթթվով մինչև pH-ի 1-2 արժեքը և թողնում սենյակային ջերմաստիճանում 10 ժամ:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում արգասիքի ելքը:

(51) (2011.01) (11) 2529 (13) A
C11B 1/00

(21) AM20110003 (22) 27.01.2011

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Վարդան Նիկողոսի Յավրույան (AM), Նարինե Տիգրանի Կարապետյան (AM), Սահակ Տիգրանի Կարապետյան (AM), Վարդան Արթուրի Կարապետյան (AM), Մարինե Մարգարետունու Աջամոլյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Խաղողի մամլվածքից սերմերի անջատման եղանակ և դրա իրագործման հոսքագիծ

(57) Գյուտը վերաբերում է սննդարդյունաբերության թափոնների վերամշակմանը, մասնավորապես՝ գինեգործության մնացորդ հանդիսացող խաղողի մամլվածքից սերմերի անջատման եղանակներին ու տեխնիկական միջոցներին, և կարող է օգտագործվել յուղարտադրության, սննդարդյունաբերության և բժշկության մեջ:

Խաղողի մամլվածքը փխրեցնում են, բաժանում մանր մասերի և չորացնում տաք օդի հոսքով: Չորացումից հետո մամլվածքը տրորում են, ազատում են սերմերը պտղամաշկից: Խառնուրդը զտում են՝ բաժանելով «սերմեր» և «աղբ» ֆրակցիաների: Սերմերն անցկացնում են մագնիսական զտիչով և կուտակում սերմերի հավաքարանում, իսկ «աղբ» ֆրակցիան կուտակում են դրա համար նախատեսված հավաքարանում:

Առաջարկված է նաև եղանակն իրականացվող հոսքագիծ:

Բարձրացվում է խաղողի մամլվածքից սերմերի անջատման գործընթացի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) (2011.01) (11) 2530 (13) A
C23C 14/00
C30B 23/00
B32B 33/00

(21) AM20110026 (22) 09.03.2011

(71) «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ», պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Վահագն Պետրոսյան (AM), Արմեն Կուզանյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(54) Բարակ թաղանթների ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բարակ թաղանթների ստացմանը, մասնավորապես՝ մեծաչափ, համասեռ հաստությամբ բարակ թաղանթների ստացմանը լազերային փոշենստեցման եղանակով:

Ըստ եղանակի պլազմային ջահից դիմակի ճեղքի միջով կատարում են թիրախի նյութի լազերային փոշենստեցում հավասարաչափ պտտվող տակդիրի վրա: Թիրախը դիմակի հետ միասին տեղաշարժում են տակդիրի տրամագծի երկայնքով, այնպես, որ տակդիրի և թիրախի վրա լազերի ֆոկալ կետի միջև հեռավորությունը մնա հաստատուն: Փոշենստեցումը կատարում են երկու և ավելի թիրախների օգնությամբ, որոնց սկզբնական կոորդինատները որոշում են համապատասխան բանաձևով: Յուրաքանչյուր թիրախի առջև տեղակայում են ճեղքով դիմակ և յուրաքանչյուր թիրախ-դիմակ համակարգը տեղաշարժում են տակդիրի տրամագծի երկայնքով: Պրոցեսի ընթացքում լազերային ճառագայթն անընդհատ տեսաձևում են բոլոր թիրախների վրայով, այնպես, որ փոշենստեցումը բոլոր թիրախներից սկսվի և ավարտվի միաժամանակ:

Արագացվում է մեծաչափ բարակ թաղանթների փոշենստեցման գործընթացը, 2 նկ.:

(74) Ա. Պետրոսյան

(51) (2011.01) (11) 2531 (13) A
C23C 14/00
C30B 23/00
B32B 33/00

(21) AM20110021 (22) 28.02.2011

(71) «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ», պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արմեն Կուզանյան (AM), Վահագն Պետրոսյան (AM), Աստղիկ Կուզանյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(54) Բարակ թաղանթների ստացման սարք

(57) Գյուտը վերաբերում է նյութագիտության բնագավառին և կարող է կիրառվել օպտիկական սարքաշինության մեջ, միկրոէլեկտրոնիկայում և բարձր տեխնոլոգիաների այլ ոլորտներում՝ համասեռ հաստությամբ և բաղադրությամբ մեծ չափերի բարակ թաղանթների փոշենստեցման համար:

Սարքն ունի վակուումային խցիկում տեղադրված երկու և ավելի թիրախներ, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում է մեկ զույգ ճեղք դիմակի վրա: Դիմակը տեղադրված է պտտվող տակդիրի անմիջական մոտակայքում, իսկ տարբեր շառավիղների վրա գտնվող ճեղքերն ունեն կորածն սեկտորի տեսք: Ճեղքերի բացվածքը և դասավորվածությունը այնպիսին են, որ դիմակի կենտրոնից գծված ցանկացած շառավղով շրջանագիծը հատում է որոշակի քանակությամբ ճեղքեր, իսկ ճեղքերի մեջ գտնվող աղեղների երկարությունների գումարը ցանկացած շառավղի համար հավասար է տրված անկյան սեկտորի նույն շառավղին համապատասխանող աղեղի երկարությանը:

Մեծացվում է փոշենստեցված թաղանթի չափը, 2 նկ.:

(74) Ա. Պետրոսյան

(51) (2011.01) (11) 2532 (13) A
F04B 1/00
F04B 27/00

(21) AM20110009 (22) 08.02.2011

(71) Ստավրիչ Վարդանի Մարգարյան (AM)

(72) Ստավրիչ Վարդանի Մարգարյան (AM)

(73) Ստավրիչ Վարդանի Մարգարյան, 0062, Երևան, Ստեփանյան 12, բն. 14 (AM)

(54) **Ռոտորային գլանամխոցավոր մեքենա**

(57) Գյուտը վերաբերում է բազմագլան մեքենաներին, որոնց գլանները տեղակայված են շրջանագծով և դրանց առանցքները զուգահեռ են շարժաբերի լիսեռի առանցքին: Մեքենան կարող է օգտագործվել արդյունաբերության տարբեր բնագավառներում՝ ինչպես պոմպային, այնպես էլ ճնշակային կատարմամբ:

Ռոտորային գլանամխոցավոր մեքենան ունի իրանի մեջ տեղակայված մխոցավոր գլաններ և շարժաբերի հետ կապված ռոտոր: Գլանների առանցքները միմյանց զուգահեռ են և դասավորված են շրջանագծով: Ռոտորի առանցքը զուգահեռ է գլանների առանցքներին և անցնում է գլանների դասավորման շրջանագծի կենտրոնով: Մխոցների շարժաթևերը կապված են ռոտորի հետ լայնական մատների միջոցով: Ռոտորը կազմված է սկավառակից և դրա վրա ամրակցված երկու սնամեջ համառանցք

գլաններից, ընդ որում արտաքին գլանի ներքին մակերևույթին և ներքին գլանի արտաքին մակերևույթին կան նման պրոֆիլավորված առվակներ: Շարժաթևերի լայնական մատները կատարված են երկբազուկ, դրանց երկու ծայրերին տեղակայված առանցքակալները նստած են պրոֆիլավորված հակադիր առվակների մեջ և փոխազդում են դրանց թեք հարթությունների հետ:

Բարձրացվում են սեղմման ճնշումը և մեքենայի արտադրողականությունը, 4 նկ.:

(51) (2011.01) (11) 2533 (13) A
F27D 11/00

(21) AM20110020 (22) 24.02.2011

(71) «Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ժան Դավիթի Դավիդյան (AM), Պարգև Սուրենի Մանուկյան (AM), Աննա Մարտինի Հարությունյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Խուղակավոր վառարան**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային և էլեկտրաթերմիային:

Խուղակավոր վառարանն ունի բովախառնուրդով լցված, կափարիչ ունեցող հալոցային վաննա, ինդուկցիոն տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորի մագնիսամիջուկի մագնիսաձողերից մեկի վրա տեղադրված է առաջնային փաթույթ, որը միացված է կարգավորվող սնման աղբյուրին, իսկ երկրորդային փաթույթը՝ հալոցային վաննայում գտնվող բովախառնուրդին է, ընդ որում երկրորդային փաթույթը կարճ փակված գալար է: Մագնիսամիջուկի մյուս մագնիսաձողը և տրանսֆորմատորի կցարկների մի մասը կափարիչի անցքով ընկղմված են վաննայի մեջ՝ բովախառնուրդի և կափարիչի նկատմամբ ուղղաձիգ ուղղությամբ շարժման հնարավորությամբ:

Պարզեցվում է հալոցային վաննայի կառուցվածքը, բարձրացվում է վառարանի ՕԳԳ-ն, ապահովվում է եռաֆազ վառարանի իրականացման հնարավորությունը, 1 նկ.:

(51) (2011.01) (11) 2534 (13) A
G02F 1/00

(21) AM20110007 (22) 31.01.2011

(71) «Երևանի պետական համալսարան», պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM), Հակոբ Մարգարյան (AM), Վլադիմիր Հարությունյան (AM), Նունե Հակոբյան (AM), Վալերի Աբրահամյան (AM), Դավիթ Հովհաննիսյան (AM)
(72) Հակոբ Մարգարյան (AM), Վլադիմիր Հարությունյան (AM), Նունե Հակոբյան (AM), Վալերի Աբրահամյան (AM), Դավիթ Հովհաննիսյան (AM)
(73) «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1 (AM), Հակոբ Մարգարյան, 0055, Երևան, Թադևոսյան 10, բն.59 (AM), Վլադիմիր Հարությունյան, 0010, Երևան, Նալբանդյան 17, բն. 18 (AM), Նունե Հակոբյան, 0033, Երևան, Բաղրամյան 75, բն. 11 (AM), Վալերի Աբրահամյան, 0905, Արմավիրի մարզ, Արմավիր, Հերացի 8, բն.3 (AM), Դավիթ Հովհաննիսյան, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 19, բն. 45 (AM)

(54) Հեղուկ բյուրեղային բջժի փոխարկման և փուլային մոդուլման կառավարման եղանակ և դրա իրականացման սարք

(57) Գյուտը վերաբերում է ֆոտոնիկայի ոլորտին, մասնավորապես՝ ֆոտոնիկայի օպտոէլեկտրոնային տարրերի ստեղծմանը և կարող է կիրառվել ադապտիվ օպտիկայում, օպտիկական կորեկցիայի, պատկերի մշակման և անալիզի, ինֆորմացիայի հոլոգրաֆիկ գրանցման խնդիրներում, ինչպես նաև դիսփլեյներում:

Ըստ եղանակի նեմատիկ հեղուկ բյուրեղային բջժի երկու տակդիրների միջև կիրառվող կառավարող արտաքին լարման հետ միաժամանակ և համափուլ կիրառում են նաև լրացուցիչ լարում՝ երկբևեռ էլեկտրական իմպուլս հեղուկ բյուրեղային բջժի տակդիրներից մեկի երկայնքով:

Եղանակն իրականացնելու համար առաջարկվում է նեմատիկ հեղուկ բյուրեղային բջիջ, որի տակդիրներից մեկի թափանցիկ հաղորդիչ շերտն ունի մեկ մետաղյա հպակային հարթակ

կառավարող լարման կիրառման համար, իսկ մյուս տակդիրի թափանցիկ հաղորդիչ շերտն ունի երկու մետաղյա հպակային հարթակ:

Կրճատվում է փոխանջատման ժամանակը, մեծանում է անցնող լույսի փուլի մոդուլման խորությունը, 2 անկախ կետ, 6 նկ.:

(51) (2011.01) (11) 2535 (13) A
H04B 7/00

H04W 88/00

(21) AM20110011 (22) 10.02.2011

(71) Աշոտ Տեր-Վարդանյան (AM), Արտաշես Տեր-Վարդանյան (AM)
(72) Աշոտ Տեր-Վարդանյան (AM), Արտաշես Տեր-Վարդանյան (AM)
(73) Աշոտ Տեր-Վարդանյան, 0019, Երևան, Բաղրամյան 1-ին փակուղի 14, բն.87 (AM), Արտաշես Տեր-Վարդանյան, 0019, Երևան, Բաղրամյան 1-ին փակուղի 14, բն. 87 (AM)

(54) Հեռահաղորդակցության համակարգ

(57) Գյուտը վերաբերում է հեռահաղորդակցության բնագավառին, մասնավորապես՝ ինտերնետային ծառայություն մատուցող համակարգերին:

Համակարգն ունի հաջորդաբար միացված ինտերնետային ծառայություն մատուցող օպերատորի տրանսպորտային ու վերջին մղոնն ապահովող համակարգեր՝ իրենց ֆունկցիոնալ հանգույցներով, և սպառողի մոտ գտնվող ընդունիչ-հաղորդիչ համակարգ: Ընդունիչ-հաղորդիչ համակարգն ունի հաջորդաբար միացված մուտքային ու կառավարման հանգույցներ, վերջնակետային սարք և կոմուտատոր: Կոմուտատորը կատարված է ինտերնետային ծառայություն մատուցող օպերատորներից ցանկացածն ընտրելու հնարավորությամբ:

Ապահովվում է գերադասելի օպերատորի ընտրությունը առանց ընդունիչ-հաղորդիչ համակարգի փոփոխման, 2 նկ.:

*ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ*

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը Ս օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) (2011.01) (11) 247 (13) Ս
A63H 33/00
- (21) AM20110029U (22) 21.03.2011
(71) Արման Հովհաննիսյան (AM)
(72) Արման Հովհաննիսյան (AM)
(73) Արման Հովհաննիսյան, 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)
(54) **Ճանաչողական գիրք**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է գիրք խաղալիքներին, մասնավորապես՝ ժամանցային և ուսուցողական խաղերին և գրքերին:
- Ճանաչողական գիրքը կազմավորված է թերթերը հորիզոնական առանցքի շուրջը պտտելու հնարավորությամբ: Գիրքն իրականացված է շրջանակի տեսքով, որի բաց կողմերում ամրակցված են հանվածքներ ունեցող թիթեղիկներ: Մեկի հանվածքը կատարված է շրջանակի դիմային կողմի ստորին հատվածամասում, իսկ մյուսինը՝ շրջանակի հակադիր կողմի վերին հատվածամասում: Շրջանակը տեղադրված է պատվանդանի վրա և հնարավորություն ունի պտտվելու դրա մեջ իր երկայնական առանցքի շուրջը: Շրջանակի յուրաքանչյուր 180° պտույտի ընթացքում ստորին շարքից մեկ թերթ տեղափոխվում է վերին շարք, իսկ թերթերի ստորին և վերին շարքերը տեղերով փոխվում են, ընդ որում շրջանակի հաջորդ պատուհանն է զբաղեցնում դիմային դիրք ցուցադրելով գրքի հաջորդ թերթը:
- Նպաստում է երեխայի հիշողության զարգացմանը, բարձրացնում է ուշադրությունը և հետաքրքրասիրությունը, 15 նկ.:
-
- (51) (2011.01) (11) 248 (13) Ս
E01C 1/00
E01D 1/00
- (21) AM20110022U (22) 28.02.2011
(71) Լևոն Համբարձումյան (AM), Միքայել Համայան (AM)

- (72) Լևոն Համբարձումյան (AM), Միքայել Համայան (AM)
(73) Լևոն Համբարձումյան (AM), Միքայել Համայան (AM)
(54) **Օդի մաքրման հնարավորությամբ ավտոճանապարհ**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ ավտոճանապարհաշինությանը:
- Ավտոճանապարհը ներառում է անվտանգության բաժանարար արգելապատ և ճանապարհի կողմնային ցանկապատ: Անվտանգության բաժանարար արգելապատը և ճանապարհի կողմնային ցանկապատն իրականացված են ուղղահայաց տեղակայված երկու մետաղյա ցանցերի և նրանց արանքում տեղադրված մանրացված ցեղիտային տուֆի լցվածքի տեսքով: Իրականացման նախընտրելի տարբերակում անվտանգության բաժանարար արգելապատը և ճանապարհի կողմնային ցանկապատը տեղադրված են բետոնե կամ քարե սալիկի վրա: Մանրացված ցեղիտային տուֆի մասնիկների չափերը մեծ են ցանցերի անցքերի չափերից և ունեն հետևյալ չափերը (զանգվ. %). 2-3մմ 55-65, 3-4 մմ 25-35, 4-5 մմ 5-15:
- Պարզեցվում է օդը մաքրող սարքերի կառուցվածքը, 3 նկ.:
- (74) Ա. Պետրոսյան
-
- (51) (2011.01) (11) 249 (13) Ս
E02B 15/00
- (21) AM20110013U (22) 15.02.2011
(71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Վաչե Հովհաննեսի Թոքմաջյան (AM), Վալտեր Աշոտի Աթանեսյան (AM)
(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Ջրմուղային կառույցների մաքրման համակարգ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է շինարարության բնագավառին և կարող է օգտագործվել ջրմուղային կառույցներում:

Համակարգն ունի հենարանային շրջանակ, որի վրա երկու կողմից հորիզոնական ուղղորդիչներով տեղաշարժվելու հնարավորությամբ ամրակցված են սայլակներ: Սայ-

լակներին հողակապորեն միակցված են ուղղաձիգ ուղղորդիչներ ցանցապատ հոլովակային կոնտեյներներով: Կոնտեյներները ճոպաններով միակցված են սայլակներին կոշտ ամրակցված կարապիկներին և ունեն թեքվելու հնարավորություն: Ուղղաձիգ ուղղորդիչները կապված են հենարային շրջանակին հետզցովի երկճյուղ բռնակներով:

Պարզեցվում է կառուցվածքը, 2 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	վկայագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
24	գրանցման թվականը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)
54	արդյունաբերական նմուշի անվանումը
55	արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
71	հայտատուն(ները), երկրի կոդը
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) **09-01** (11) **253** (13) **S**
(21) **20110005** (22) **23.02.2011**
(71) Վահագն Գևորգյան (AM)
(72) Վահագն Գևորգյան (AM)
(73) Վահագն Գևորգյան, Երևան, Ա.Ավետիսյան
80-56, AM (AM)
(54) **Ապակյա շիշ սերկևիլի տեսքով**
(55)



1.1



1.3

(51) **11-01** (11) **254** (13) **S**
(21) **20110009** (22) **21.03.2011**
(71) Արեգ Աղասարյան (AM)
(72) Արեգ Աղասարյան (AM)
(73) Արեգ Աղասարյան (AM)
(74) Ա. Գալոյան
(54) **Ոսկերչական իր (խաչ)**
(55)



1.2



1.1



1.2



1.2

(51) 11-01 (11) 255 (13) S
(21) 20110008 (22) 21.03.2011
(71) Արեգ Աղասարյան (AM)
(72) Արեգ Աղասարյան (AM)
(73) Արեգ Աղասարյան (AM)
(74) Ա. Գալոյան
(54) Ոսկերչական իր (մատանի)
(55)



1.3



1.1



1.4

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20101118**
(220) **28.07.2010**

(111) **16937**
(151) **02.05.2011**
(181) **28.07.2020**

(730) Օբշչեստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեն-
նոստյու «Բրավո պրեմիում», RU

(442) 21.10.2010

(540)

CHATEAU AMORE

(511) (510)

դաս 32. ոչ ալկոհոլային ապերիտիվներ. հանքային և գազավորված ջրեր. բնական (ոչ արհեստական) հանքային ջրեր. կվաս (ոչ ալկոհոլային ըմպելիք). ոչ ալկոհոլային կոկտեյլներ. ոչ ալկոհոլային կոկտեյլներ բնական հյութերից (պտուղա - հատապտղային, ցիտրուսային, բանջարեղենային), այդ թվում՝ համեմունքներով. ոչ ալկոհոլային ըմպելիքների համար կոնցենտրատներ (այդ թվում՝ հյութերի, սինթետիկ հումքի հիմքի վրա, բուրուժնավետ հումքի հիմքի վրա բնականին նման, բնական հումքի հիմքի վրա). խտացրած հիմքեր (ոչ ալկոհոլային ըմպելիքների, բալզամների համար). լիմոնադներ. կաթնա - գետնընկուզային ըմպելիքներ. ոչ ալկոհոլային ըմպելիքներ (գազավորված և ոչ գազավորված). ոչ ալկոհոլային գազավորված ըմպելիքներ (պտուղա - հատապտղային հյութերով և էքստրակտներով, գինիներով, ցիտրուսային թուրմերով). իզոտոնիկ ըմպելիքներ. ըմպելիքներ մեղրի հիմքի վրա (ոչ ալկոհոլային). ըմպելիքներ կաթնաշիճուկային հիմքի վրա. մրգային ըմպելիքներ. ըմպելիքներ բնական հյութերով (պտուղա - հատապտղային, ցիտրուսային, բանջարեղենային). ոչ ալկոհոլային ըմպելիքներ՝ բնական թունդ բուրուժնավետ բուսական հումքի վրա. ոչ ալկոհոլային ըմպելիքներ բուրուժնավետարարներով՝ բնականին նման. ըմպելիքներ հանքային ջրերի հիմքի վրա. կաթնա - նշային ըմպելիքներ. մրգային նեկտարներ պտղամսով. օրշաղ (ըմպելիք). գարեջուր. գարեջուր (ոչ ալկոհոլային). փոշիներ գազավորված ըմպելիքներ պատրաստելու համար. աղբյուրի

ջուր. սոդայաջուր. պատատուկի ըմպելիք (ոչ ալկոհոլային). օշարակներ լիմոնադների համար. օշարակներ ըմպելիքների համար. խնձորի հյութ. տոմատի հյութ. բանջարեղենի հյութեր. մրգահյութեր. բաղադրություններ գազավորված ջուր պատրաստելու համար. բաղադրություններ լիկյոր պատրաստելու համար. բաղադրություններ հանքային ջուր պատրաստելու համար. բաղադրություններ ըմպելիքներ պատրաստելու համար. քաղցրահյութեր. խաղողահյութ. գարեջրի քաղցրահյութ. ածիկի քաղցրահյութ. հաբեր գազավորված ըմպելիքներ պատրաստելու համար. շարբաթ (ըմպելիք). ոչ ալկոհոլային մրգային էքստրակտներ. գալյուկի էքստրակտներ գարեջուր պատրաստելու համար. էսենցիաներ ըմպելիքներ պատրաստելու համար.

դաս 33. ապերիտիվներ. բալզամներ. բրենդի. գինի. գինի խաղողի չանչերից. վիսկի. օղի. ջին. դիժեստիվներ. կոկտեյլներ, այդ թվում՝ աննշան ալկոհոլ պարունակող. տարբեր օղիներ և(կամ) դառը թուրմեր պարունակող ալկոհոլային կոկտեյլներ. լիկյորներ (թունդ, դեսերտային, էմուլսիոն). ալկոհոլային ըմպելիքներ. մրգեր պարունակող ալկոհոլային ըմպելիքներ. սպիրտային ըմպելիքներ. թորման միջոցով ստացված ըմպելիքներ. մեղրի ըմպելիք. աննշան ալկոհոլով հյութ պարունակող ըմպելիքներ. դաղձի թրմօղի. դառը թրմօղի. մրգային և մրգահյութերով, բանջարեղենային և բանջարեղենային հյութերով սպիրտային թրմօղի. ռոմ. սակե. խնձորի օղի. բրնձի սպիրտ. սպիրտային էքստրակտներ. սպիրտային մրգային էքստրակտներ. սպիրտային էսենցիաներ:

(740) Ա. Գալոյան

(210) **20101204**
(220) **18.08.2010**

(111) **16938**
(151) **02.05.2011**
(181) **18.08.2020**

(730) Շյանգ Յուն Թուլս Քո., Լթդ, TW

(442) 22.09.2010

(540)



(511) (510)

դաս 6. անիմներով մետաղյա դարակաշարեր գործիքների համար, մետաղյա արկղեր գործիքների համար, մետաղյա տուփեր գործիքների համար, մետաղյա ցուցադրափեղկեր (ստենդներ, ցուցադրավահաններ) գործիքների համար, մետաղյա բեռնարկղեր, մետաղյա ձեռնասանդուղքներ և զուգասանդուղքներ, մետաղյա կոթեր գործիքների համար, մամլակների շուրթեր (մետաղական), մամլակներ (մետաղական), մամլակներով մետաղական դազգահներ և գործասեղաններ.

դաս 7. օդաճնշական գործիքներ, այն է՝ հարվածային ազդեցությամբ օդաճնշական դարձակներ, ճշանակային մանեկադարձակներ, հղկահաստոցներ, սրելահաստոցներ (հեսանահաստոցներ), ջարդիչներ, հարթահղկման ձեռքի մեքենաներ, գամիչ մուրճեր (գամամուրճեր), պտուտակիչներ և պտուտակադարձիչներ, գայլիկոններ, գայլիկոնիչ հաստոցներ և մուրճավոր հորատիչներ, էներգիայով կառավարվող (մեքենայացված) պտուտակիչներ և պտուտակադարձիչներ, դյուրատար էլեկտրամուրճեր, էլեկտրական ձեռքի գայլիկոնիչներ, մեխանիկական շարժաբերով դարձակներ, էներգիայով կառավարվող (մեքենայացված) սղոցներ և կտրող հաստոցներ, էներգիայով կառավարվող (մեքենայացված) գործիքներ երկաթակապերի համար, էլեկտրական մուրճեր, մեխանիկական շարժաբերով երկաթակապերի կարիչներ, մեխանիկական շարժաբերով գործիքների երկարիչներ, շարժական գործիքներ, բացի ձեռքով կառավարվողներից.

դաս 8. ձեռքով կառավարվող շարժական գործիքներ, այն է՝ մանեկադարձակներ, բահեր, անցքահատ աքցաններ, թակեր, խարտոցներ, սայրերով կտրող գործիքներ, աղեղասղոցներ, պարուրահաններ, ճշանակներ, մազերը կտրելու մեխանիկական մկրատներ, խողովակների կտրման գործիքներ, խողովակահատեր, սղոցներ, ձեռքի լայնակոկման գործիքներ, ներպարուրակիչներ, ձեռքի գամիչ գործիքներ, չափաբերման և վերջնամշակման գործիք-

ներ, սվաղի թիակներ և ծեփաթիակներ, պտուտակամամուլներ, ամրակներ և սեղմակներ, կտրող գործիքներ, քերաններ, հողի շերտիչներ, պտտիկներ և պարուրահաններ, ձգիչ սարքեր պողպատյա ժապավենների համար, տոփանումներ, այգեգործական գործիքներ, անկյունաքանոններ և կետանշիչներ, երկարիչներ ձեռքի գործիքների համար.

դաս 20. անիմներով ոչ մետաղական պահարաններ գործիքների համար, կոմոդներ (դուրս քաշվող դարակներով պահարաններ), ցուցափեղկեր և ցուցասեղաններ, ցուցապահարաններ (կահույք). գործիքների ոչ մետաղական կոթեր. ոչ մետաղական ձեռնասանդուղքներ և զուգասանդուղքներ, մամլակներով ոչ մետաղական դազգահներ և գործասեղաններ, ոչ մետաղական սնդուկներ, դազգահներ և գործասեղաններ, աթոռներ. մետաղական սեղաններ. մետաղական աթոռներ. գրասենյակային կահույք. մետաղական դարակաշարեր (կահույք):

(740) Ալ. Նահապետյան

(210) 20101267

(220) 06.09.2010

(111) 16939

(151) 02.05.2011

(181) 06.09.2020

(730) Էքս Հասիենդա Լոս Քամիչինես, Ս.Ա. դե Ց.Վ., MX

(442) 22.11.2010

(540)



(511) (510)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ, թեթիլա, թեթիլայի լիկյորներ, ալկոհոլային կոկտեյլներ:

(740) Ա. Գալոյան

(210) **20101370**
(220) **24.09.2010**

(111) **16940**
(151) **02.05.2011**
(181) **24.09.2020**

(730) «Տղամարդու առողջություն» ՍՊԸ, Երևան,
Արամ Խաչատրյան 17/59, AM
(442) 21.10.2010
(540)



(526) «SANTE» բառն ինքնուրույն պահպանության
օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է սպիտակ, կապույտ
և նարնջագույն գունային համակցությամբ:

(511) (510)
դաս 44. բժշկական կենտրոն:

(210) **20101405**
(220) **06.10.2010**

(111) **16941**
(151) **02.05.2011**
(181) **06.10.2020**

(730) «Ալվան» ՍՊԸ, Արմավիր, Սահմանապահ-
ների 6ա-5, AM
(442) 21.10.2010
(540)



(526) Բացի «ԱԼՎԱՆ» բառից մնացած բոլոր
գրառումներն ինքնուրույն պահպանության
օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է բաց և մուգ շագա-
նակագույն, կարմրաշագանակագույն,
բրոնզագույն, ոսկեգույն գունային համակ-
ցությամբ:

(511) (510)
դաս 33. հայկական կոնյակ (բրենդի):

(210) **20101418**
(220) **08.10.2010**

(111) **16942**
(151) **02.05.2011**
(181) **08.10.2020**

(730) Քոնդոր Քո. Ինք., IR
(442) 22.12.2010
(540)

Lo Lo

(511) (510)

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ
և այլ նյութեր լվացքի համար. պատրաս-
տուկներ մաքրման, ողորկման (փայլեցման),
ճարպագերծման և հղկամշակման համար.
օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, կոսմե-
տիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար.
ատամի փոշիներ և մածուկներ.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ,
տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալ-
յուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրու-
շակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր,
մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ,
մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք).
համեմունք. սառույց.

դաս 32. գարեջուր. հանքային և գազա-
վորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ.
մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշա-
րակներ և ըմպելիքների պատրաստման այլ
բաղադրանյութեր:

(740) Ա. Գալոյան

(210) **20101432**
(220) **11.10.2010**

(111) **16943**
(151) **02.05.2011**
(181) **11.10.2020**

(730) Հիմալայա Գլոբըլ Հոլդինգ Լթդ., AE
(442) 21.01.2011
(540)

THE HIMALAYA DRUG COMPANY

(511) (510)

դաս 3. կոսմետիկական միջոցներ, այդ թվում կոսմետիկական պատրաստուկներ նիհարելու համար. կոսմետիկական լոսյոններ արևայրուկի համար. կոսմետիկական քսուքներ. եթերային յուղեր, շամպուններ և մազերի լոսյոններ.

դաս 5. դեղագործական պատրաստուկներ և դիետիկ նյութեր բուժական նպատակների համար.

դաս 30. մեղրի և թեյի համադրություններ:
(740) Ան. Նահապետյան

(210) **20101449**
(220) **15.10.2010**

(111) **16945**
(151) **02.05.2011**
(181) **15.10.2020**

(730) Աննո Պետրոսյան, Երևան, Արամ Խաչատրյան 17 տուն, AM

(442) 22.11.2010
(540)



(591) Նշանը պահպանվում է գազարագույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

(210) **20101433**
(220) **11.10.2010**

(111) **16944**
(151) **02.05.2011**
(181) **11.10.2020**

(730) Հիմալայա Գլոբըլ Հոլդինգ Լթդ., AE
(442) 21.01.2011
(540)



(591) Նշանը պահպանվում է կապտականաչ, նարնջագույն և սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 3. կոսմետիկական միջոցներ, այդ թվում կոսմետիկական պատրաստուկներ նիհարելու համար. կոսմետիկական լոսյոններ արևայրուկի համար. կոսմետիկական քսուքներ. եթերային յուղեր, շամպուններ և մազերի լոսյոններ.

դաս 5. դեղագործական պատրաստուկներ և դիետիկ նյութեր բուժական նպատակների համար.

դաս 30. մեղրի և թեյի համադրություններ:
(740) Ան. Նահապետյան

(210) **20101469**
(220) **18.10.2010**

(111) **16946**
(151) **02.05.2011**
(181) **18.10.2020**

(730) Քոնդոր Քո. Ինք., IR
(442) 22.12.2010
(540)



(526) «DETERGENT POWDER», «UNIQUE AND RELIABLE PRODUCT» արտահայտություններն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է կանաչ, կապույտ, սպիտակ, երկնագույն, դեղին և կարմիր գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 3. լվացքի փոշի:
(740) Ա. Գալոյան

(210) **20101497**
(220) **21.10.2010**

(111) **16947**
(151) **02.05.2011**
(181) **21.10.2020**

(730) Մանուկա Հելս Նյու Զիլանդ Լիմիթիդ, NZ
(442) 21.01.2011

(540)



(511) (510)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ և նյութեր, ներառյալ՝ ծաղկափոշի, մեղր և (կամ) այլ մեղվաբուժական մթերքներ պարունակող բուժական և դիետիկ պատրաստուկներ. վիտամինային և հանքային հավելանյութեր, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղվամոր կաթ, ակնամոմ, ծաղկափոշի, մեղրամոմ և (կամ) մեղր. բերանով և ներքին ընդունման դեղագործական պատրաստուկներ հանդիսացող հակամանրէական միջոցներ վերքերի համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ծաղկափոշի, կոլոդիում, ակնամոմ, մեղվամոր կաթ, մեղվի թույն և (կամ) մեղրամոմ. բերանով և ներքին ընդունման դեղագործական պատրաստուկներ հանդիսացող հականեխիչ միջոցներ վերքերի համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ծաղկափոշի, կոլոդիում, ակնամոմ, մեղվամոր կաթ, մեղվի թույն և (կամ) մեղրամոմ. թանգիֆ վիրակապերի համար, սպեղանիներ, վիրակապային բանդաժներ, հականեխիչ բժշկական և վիրաբուժական վիրակապման նյութեր, հականեխիչ բժշկական և վիրաբուժական բանդաժներ, հականեխիչ բժշկական և վիրաբուժական թանգիֆներ, անձեռոցիկներ վերքերի համար՝ տոգորված կամ պատված դեղային լոսյոններով, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղվամոր կաթ, ծաղկափոշի, մեղրամոմ և (կամ) մեղր. դեղագործական պատրաստուկներ մաշկի խնամքի համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղվամոր կաթ, ծաղկափոշի, մեղրամոմ և (կամ) մեղր. ներքին ընդունման հակամանրէական և հականեխիչ թեյեր բու-

ժական, բժշկական և ատամնաբուժական նպատակների համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ակնամոմ, մեղվամոր կաթ, ծաղկափոշի, մեղվի թույն և (կամ) մեղրամոմ. ներքին ընդունման հակամանրէական և հականեխիչ ըմպելիքներ բժշկական, բուժական և ատամնաբուժական նպատակների համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ակնամոմ, մեղվամոր կաթ, ծաղկափոշի, մեղվի թույն և (կամ) մեղրամոմ. տոնուսը բարձրացնող ներքին ընդունման հակամանրէական և հականեխիչ միջոցներ բժշկական, բուժական և ատամնաբուժական նպատակների համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ակնամոմ, մեղվամոր կաթ, ծաղկափոշի, մեղվի թույն և (կամ) մեղրամոմ. ներքին ընդունման հակամանրէական և հականեխիչ դեղաթուրմեր բժշկական, բուժական և ատամնաբուժական նպատակների համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ակնամոմ, մեղվամոր կաթ, ծաղկափոշի, մեղվի թույն և (կամ) մեղրամոմ. ներքին ընդունման հակամանրէական և հականեխիչ պաստեղներ բժշկական, բուժական և ատամնաբուժական նպատակների համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ակնամոմ, մեղվամոր կաթ, ծաղկափոշի, մեղվի թույն և (կամ) մեղրամոմ. ներքին ընդունման հակամանրէական և հականեխիչ հաբեր բժշկական, բուժական և ատամնաբուժական նպատակների համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ակնամոմ, մեղվամոր կաթ, ծաղկափոշի, մեղրամոմ և (կամ) մեղր. տեղային դեղորայքային ժելեր դեղագործական և անասնաբուժական նպատակների համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղվամոր կաթ, ակնամոմ, ծաղկափոշի, մեղրամոմ և (կամ) մեղր. տեղային դեղորայքային ժելեր դեղագործական և անասնաբուժական նպատակների համար, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղվամոր կաթ, ակնամոմ, ծաղկափոշի, մեղրամոմ և (կամ) մեղր. տվյալ դասում ընդգրկված բոլոր ապրանքները, որոնք պատրաստված են կամ պարունակում են մանուկայի (թեյի ծառ) մեղր.

դաս 30. մեղր պարունակող պատրաստի սննդամթերք. մեղր, ակնամոմ մարդկանց համար, մեղվամոր կաթ մարդկանց համար (բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների). հրուշակի իրիսներ, շոկոլադ, սառեցված աղանդեր մեղրի հիմքի վրա. մեղր պարունակող պատրաստի նախաճաշ՝ պատրաստված ցորենից, վարսակից, բրնձից. մեղրի հիմքի վրա համեմունքներ աղցանների համար, մեղրի հիմքի վրա սոուսներ աղցանների համար, մեղր պարունակող սոուսներ աղցանների և մսի համար և աղանդեր, որոնք պատրաստված են կամ պարունակում են մեղր, ակնամոմ, մեղվամոր կաթ, ծաղկափոշի, տվյալ դասում ընդգրկված բոլոր ապրանքները, որոնք պատրաստված են կամ պարունակում են մանուկայի (թեյի ծառ) մեղր:
(740) Ա. Գալոյան

(210) **20101540** (111) **16948**
(220) **29.10.2010** (151) **02.05.2011**
(181) **29.10.2020**
(730) «Եղվարդի գինու-կոնյակի գործարան»
ՓԲԸ, Եղվարդ, Չարենցի 1, AM
(442) 22.11.2010
(540)



(526) Բացի «ԵՂՎԱՐԴ», «ԵԳՎԱՐԴ» (ռուս.) բառերից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
(591) Նշանը պահպանվում է մուգ և բաց շագանակագույն, վարդագույն, բաց և մուգ կանաչ, ոսկեգույն, սպիտակ, դեղին և սև գույնային համակցությամբ:
(511) (510)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

(210) **20101589** (111) **16949**
(220) **04.11.2010** (151) **02.05.2011**
(181) **04.11.2020**
(730) «Մանչո գրուպ» ՍՊԸ, Երևան, Արին-Բերդի նրբ. 5, N 10, AM
(442) 22.11.2010
(540)

Ալեքսանդրապոլ

(511) (510)
դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) **20101653** (111) **16950**
(220) **12.11.2010** (151) **02.05.2011**
(181) **12.11.2020**
(730) Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ, GB
(442) 22.12.2010
(540)



(591) Նշանը պահպանվում է նարնջագույն գույնով:
(511) (510)
դաս 9. էլեկտրական և էլեկտրոնային հաղորդակցական և հեռահաղորդակցական սարքեր և սարքավորումներ. հաղորդակցական և հեռահաղորդակցական սարքեր և սարքավորումներ. էլեկտրական և էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ՝ նախատեսված տվյալների մշակման, գրանցման, պահման, փոխանցման, որոնման, աղբերման կամ ստացման համար. սարքեր և սարքավորումներ ձայնի, պատկերների, տեղեկատվության և ծածկագրված տվյալների գրանցման, փոխանց-

ման, ուժեղացման կամ վերարտադրման համար. խցիկներ. լուսանկարչական սարքեր, գործիքներ և սարքավորանք. պատկերի մշակման սարքեր, գործիքներ և սարքավորանք. հեռուստատեսային և ռադիոսարքեր և սարքավորումներ. հեռահաղորդակցական, ռադիո և հեռուստատեսային հեռարձակման հաղորդող և ընդունող սարքեր. հեռարձակված կամ հաղորդված ծրագրերի մուտքի ապահովման սարքեր. հոլոգրամներ. համակարգիչներ. համակարգիչներին կից սարքավորումներ. ծրագրավորված տվյալներ պարունակող էլեկտրոնային սխեմաներ. համակարգչային ծրագրեր. համակարգչային ծրագրային արտադրանք. տվյալների մագնիսական կրիչներ հանդիսացող սկավառակներ, ժապավեններ և լարեր. դատարկ և նախապես գրանցված մագնիսական քարտեր. տվյալների քարտեր. հիշողության քարտեր. բանական քարտեր. միկրոպրոցեսորներ պարունակող քարտեր. ինտեգրալային սխեմաների քարտեր. նույնականացման էլեկտրոնային քարտեր. հեռախոսային քարտեր. հեռախոսային վարկաքարտեր. վարկաքարտեր. հաշվեքարտեր. քարտեր էլեկտրոնային խաղերի համար, որոնք նախատեսված են հեռախոսների հետ օգտագործման համար. CD ROM-ներ. տվյալների մագնիսական, թվային և օպտիկական կրիչներ. մագնիսական, թվային և օպտիկական տվյալների գրանցման և պահման կրիչներ (դատարկ և նախապես գրանցված). ինտերնետից տրամադրվող համակարգչային ծրագրային արտադրանք. համակարգչային տվյալների բազաներից կամ ինտերնետից օնլայն ռեժիմում տրամադրվող էլեկտրոնային հրատարակումներ (բեռնվող). համակարգչային ծրագրային արտադրանք և հեռահաղորդակցական սարքեր (ներառյալ մոդեմներ), որոնք հնարավորություն են տալիս միանալ տվյալների բազաներին, լոկալ ցանցերին և ինտերնետին. համակարգչային ծրագրային արտադրանք հեռուստակոնֆերանսների, տեսակոնֆերանսների և տեսահեռախոսների ծառայությունների մատուցման համար. համակարգչային ծրագրային արտադրանք տվյալների որոնման և առբերման համար. համակարգչային ծրագրային արտադրանք դեպի

տվյալների բազաներ մուտքի ապահովման, հեռահաղորդակցական ծառայությունների մատուցման, համակարգչային ցանցերի և հայտարարությունների էլեկտրոնային տախտակների համար. համակարգչային խաղերի ծրագրային արտադրանք. համակարգչային տվյալների բազաներից կամ ինտերնետից տրամադրվող թվային երաժշտություն (բեռնվող). MP3 ինտերնետային վեբ-կայքերից տրամադրվող թվային երաժշտություն (բեռնվող). սարքեր ինտերնետից ստացված երաժշտության նվագարկման համար. MP3 նվագարկիչներ. համակարգչային տվյալների բազաներից կամ ինտերնետից կամ ինտերնետային կայքերից օնլայն ռեժիմում տրամադրվող լուսանկարներ, նկարներ, գրաֆիկա, ծայնային ֆայլեր, ֆիլմեր, տեսատվյալներ և ծայնատեսային ծրագրեր (բեռնվող). հեռահսկման սարքեր և սարքավորումներ. համակարգչային ծրագրային արտադրանք հեռահսկման համար. արբանյակային ընդունող և հաղորդող սարքեր. հեռահաղորդակցության և հեռարձակման արբանյակներ. ռադիոհեռախոսային փարոսներ և հեռախոսային կայմեր. էլեկտրական լարեր և մալուխներ. օպտիկական մալուխներ. դիմադրողականության լարեր. էլեկտրոդներ. հեռահաղորդակցական համակարգեր և կայանքներ. հեռախոսային ցանցերի տերմինալներ. հեռախոսային կոմուտատորներ. հեռահաղորդակցական ազդանշանի մուտքի, պահման, փոխակերպման և մշակման սարքեր. հեռախոսային սարքավորանք. սարքավորանք ֆիքսված, շարժական, բջջային, բարձրախոսով հեռախոսների կամ ձայնով կառավարվող հեռախոսների համար. մուլտիմեդիա տերմինալներ. ինտերակտիվ տերմինալներ ապրանքների և ծառայությունների ցուցադրման և պատվիրման համար. փեյջինգային, ռադիոփեյջինգային և ռադիոհեռախոսային սարքեր և սարքավորումներ. հեռախոսներ, շարժական հեռախոսներ և հեռախոսային լսափողեր. ֆաքսիմիլային ապարատներ. հեռախոսների և հեռախոսային լսափողերի լրակազմեր. հեռախոսների հետ օգտագործվող ադապտերներ. հեռախոսների լիցքավորման սարքեր. գրասեղաններին կամ ավտոմեքենաներում տեղակայված բարձրախոսով սարքեր՝ հեռախոսի ավտոմատ

օգտագործման համար. ավտոմեքենաներում տեղադրվող հեռախոսային լսափողների հենարաններ. պայուսակներ և պատյաններ՝ հատուկ նախատեսված շարժական հեռախոսների և հեռախոսային սարքերի ու լրասարքերի պահման և կրման համար. համակարգչայնացված անձնական քարտուղարներ. ալեհավաքներ. մարտկոցներ. միկրոպրոցեսորներ. ստեղնաշարեր. մոդեմներ. հաշվիչ մեքենաներ. դիսփլեյներ. գլոբալ դիրքավորման էլեկտրոնային համակարգեր. նավարկման, հետևման և դիրքավորման էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ. հսկման սարքեր և սարքավորումներ (բացառությամբ in-vivo հսկման). ռադիոսարքեր և սարքավորումներ. կառավարման, տեստավորման (բացառությամբ in-vivo տեստավորման), ազդանշանման, հսկման (ստուգման) և ուսուցողական էլեկտրական սարքեր և գործիքներ. օպտիկական և էլեկտրաօպտիկական սարքեր և գործիքներ. տեսաֆիլմեր. ծայնատեսային սարքեր և սարքավորումներ. էլեկտրոնային խաղերի սարքեր և սարքավորումներ. էլեկտրական և էլեկտրոնային լրացուցիչ պարագաներ և կից սարքավորանք, որոնք նախատեսված և հարմարեցված են համակարգիչների, ծայնատեսային սարքերի և էլեկտրոնային խաղերի սարքերի ու սարքավորումների հետ օգտագործման համար. վերոհիշյալ ապրանքների մասեր և կցամասեր.

դաս 38. հեռահաղորդակցություն. հաղորդակցություն. հեռախոսների, շարժական հեռախոսների, ֆաքսիմիլների, տելեքսի, հաղորդագրությունների հավաքման և փոխանցման, ռադիոփոխանակի, հեռախոսականչի երթուղու փոփոխման, ինքնապատասխանիչի, տեղեկատուի և էլեկտրոնային փոստի ծառայություններ. ծայնի, տվյալների, պատկերների, երաժշտության և տեղեկատվության փոխանցում, տեղ հասցնում և ընդունում. էլեկտրոնային հաղորդագրությունների տեղ հասցնում. օնլայն տեղեկատվություն հեռահաղորդակցության վերաբերյալ. տվյալների միջփոխանակման ծառայություններ. տվյալների փոխանցում հեռահաղորդակցության միջոցով. արբանյակային կապի ծառայություններ. հեռարձակման ծառայություններ. ռադիո կամ հեռուստատեսային ծրագրերի ու ֆիլմերի, հեռուստախանութ ու վեբ-խանութ ծրագրերի հեռարձակում կամ

